ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 27-Ա

«16» հոկտեմբերի - 2018թ. թիվ 9 արտահերթ նիստ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 16 -ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Յուրիկ Ասլանյան	----------	----------	----------
Արամ Գրիգորյան	----------	----------	----------
Գարիկ Գևորգյան	----------	----------	----------
Նարեկ Սիմոնյան	----------	----------	----------
Վարդան Սիմոնյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի հոկտեմբերի «16»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 00

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2018 թվականի
հոկտեմբերի 16-ի թիվ 9 արտահերթ
նիստի N 27-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1) Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2) Գումար հատկացնելու մասին.

3) Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն աճուրդային կարգով վաճառելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 28-Ա

«16» հոկտեմբերի - 2018թ. թիվ 9 արտահերթ նիստ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 2018 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 30 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2018 թվականի բյուջեի «Միջնակարգ ընդհանուր կրթություն» 0922 ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածից 450 000 /չորս հարյուր հիսուն հազար / Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 7-րդ դասարանի դասավանդող ուսուցիչների աշխատավարձը վճարելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Յուրիկ Ասլանյան	----------	----------	----------
Արամ Գրիգորյան	----------	----------	----------
Գարիկ Գևորգյան	----------	----------	----------
Նարեկ Սիմոնյան	----------	----------	----------
Վարդան Սիմոնյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի հոկտեմբերի «16»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 29-Ն

«16» հոկտեմբերի - 2018թ. քիվ 9 արտահերթ նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող 04-048-0201-0013 ծածկագրի 0,1137 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատարածքը, 04-048-0004-0039 ծածկագրի 0,0249 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատարածքը և նրան ամրակայված 04-048-0004-0039-001 ծածկագրի 218 քմ կիսաքանդ շինությունը օտարել աճուրդային կարգով:

1/ 04-048-0201-0013 ծածկագրի 0,1137 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատարածքի համար, աճուրդային կարգով, օտարման մեկնարկային գին սահմանել 1412200 /մեկ միլիոն չորս հարյուր տասներկու հազար երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ: Կանխավճարը և մեկ քայլի չափը 70610 /յոթանասուն հազար վեց հարյուր տաս/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2/ 04-048-0004-0039 ծածկագրի 0,0249 հա հողատարածքի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատարածքի և նրան ամրակայված 04-048-0004-0039-001 ծածկագրի 218 քմ կիսաքանդ շինության համար, աճուրդային կարգով,օտարման մեկնարկային գին սահմանել 504550 /հինգ հարյուր չորս հազար հինգ հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ: Կանխավճարը և մեկ քայլի չափը 25230 /քսանհինգ հազար երկու հարյուր երեսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Մասնակցության վճար սահմանել 10000 /տասը հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Համայնքի ղեկավարին իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները: Աճուրդն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ

	Կողմ(5)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
Յուրիկ Ասլանյան	----------	----------	----------
Արամ Գրիգորյան	----------	----------	----------
Գարիկ Գևորգյան	----------	----------	----------
Նարեկ Սիմոնյան	----------	----------	----------
Վարդան Սիմոնյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թվականի հոկտեմբերի «16»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13^{00}